Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

08.02.2022թ.-ին կնքված թիվ PDU-26-02-22
Փոստային կապի ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան **06.12.2022 թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 19.02.2021թ.-ի թիվ 418-Ա հրամանով, և ՀՀ պետական վերահսկողական ծառայություն (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս Գլխավոր քարտուղարի՝ Անի Բաղդասարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 08.02.2022թ.-ին կնքված թիվ PDU-26-02-22 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Կոմերցիոն տնօրեն
Ցոլակ Հովհաննեսյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ք.Երևան, Մաշտոցի 47
ՀՎՀՀ՝ 00183253
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900011021954
Հեռ.՝ (010) 313-182

Գլխավոր քարտուղար՝
Անի Բաղդասարյան----------
/ստորագրություն/